ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/17

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչներ

Ս. Ազատյանի (լիազորագիր՝ տրված 29.03.2021թ.),

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 29.03.2021թ.),

Եղվարդի համայնքապետարանի ներկայացուցիչ

Վ. Վիրաբյանի (լիազորագիր՝ տրված 08.04.2021թ.),

Պետական վերահսկողության ծառայության ներկայացուցիչ

Մ. Սահակյանի (լիազորագիր՝ տրված 06.04.2021թ.),

քննելով Եղվարդի համայնքապետարանի (հետայսու՝ Պատվիրատու)կողմից Եղվարդ համայնքի կարիքների համար «Եղվարդի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄԵՔ-

ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 26.03.2021թ. ներկայացված (29.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/17 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Էներգացանցշին» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էներգացանցշին» ԲԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 26.03.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Եղվարդի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 7.4. կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Էներգացանցշին» ԲԲԸ-ն և «Կոտայք Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը, և նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ որոշել է կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Իսկ այնուհետև www.gnumner.am համացանցային կայքում 24.03.2021թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարության և հայտարարվել 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական

նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն-ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 7.4. կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում...:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ինչպես արդեն հայտնել ենք, Եղվարդի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցում, որին ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Էներգացանցշին» ԲԲԸ-ն և «Կոտայք Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը, և նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ որոշել է կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդեն 23.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ՝

3) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի

ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում...:

Հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը

գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտի փաթեթում բացակայել է հայտի ապահովումը, այնուհետև ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բանկային երաշխիք /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո՝ վերջնաժամկետի ամսաթվից հետո թվագրված:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 19.03.2021թ. ժամը 11:00-ին:

Մինչդեռ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 23.03.2021թ.:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության հետևյալ խախտումները.

Ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Մինչդեռ, «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, տրված է 23.03.2021թ., այսինքն հայտը ներկայացնելու օրվան հաջորդող միայն չորրորդ օրը: Այլ կերպ ասած, Ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, տվյալ բանկային երաշխիքը չի եղել վավեր հայտը ներկայացնելու օրը, ինչը նշանակում է, որ այս դեպքում մասնակցի հայտը պետք է գնահատվեր անբավավար և մերժվեր:

Վերոհիշյալը փաստում է, որ «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, չիրականացնելով պատշաճ վարչարարություն, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ոչ օրինական դրդապատճառներով բավարար է գնահատել բավարար գնահատման ոչ ենթակա «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորեցնել «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք Եղվարդի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կոտայք Շին» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, մինչդեռ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, 19.03.2021թ. փոխարեն՝ 23.03.2021թ.:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա՝

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն-ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի Հրավերի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում…:

Հատկանշական է, որ Ընթացակարգի հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 19.03.2021թ. ժամը 11:00-ին, իսկ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը /որպես հայտի ապահովում/ ներկայացվել է հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո, այն է՝ 23.03.2021թ.:

Այսինքն, «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, տրված է 23.03.2021թ., այսինքն հայտը ներկայացնելու օրվան հաջորդող միայն չորրորդ օրը: Այլ կերպ ասած, Ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, տվյալ բանկային երաշխիքը չի եղել վավեր հայտը ներկայացնելու օրը, ինչը նշանակում է, որ այս դեպքում մասնակցի հայտը պետք է գնահատվեր անբավավար և մերժվեր, մինչդեռ Հրավերով իմպերատիվ սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այս պարագայում հայտնում ենք, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հայտի ապահովման բացակայության փաստը արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով և նույն 19.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ էլ որոշել է ծանուցել մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է ոչ թե 19.03.2021թ., այլ փոխարենը 22.03.2021թ.:

3. Ընթացակարգի Հրավերի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այս պարագայում հայտնում ենք, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 22.03.2021 թվականն է և հաշվի առնելով, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը տրամադրվել է 23.03.2021թ., ուստի տրամաբանական է նաև, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ն չէր կարող 22.03.2021թ. գնահատող

հանձնաժողովին ներկայացնել նաև բանկային երաշխիքի բնօրինակը՝ կից ուղեկցական գրությամբ:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, չիրականացնելով պատշաճ վարչարարություն, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ոչ օրինական դրդապատճառներով բավարար է գնահատել բավարար գնահատման ոչ ենթակա «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

3. Եվ վերջապես՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ որպես «պետական կառույց», ստեղծված է ապահովել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների իրականացմանն ուղղված բոլոր ոչ իրավաչափ գործողությունների կանխմանը, իր իսկ որոշումներով պարտավորեցնել գնահատող հանձնաժողովներին՝ որպեսզի վերջիններս առաջնորդվեն բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների շրջանակներում՝ չխախտելով մասնակիցների շահերը:

Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժեր «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մի շարք հիմքերով, այն է՝ Հայտի ապահովումը սահմանված ժամկետում չներկայացնելու և Հայտի ապահովման բնօրինակը հաջորդ աշխատանքային օրը մինչև ժամը 17:00-ն չներկայացնելու հիմքով, սակայն կասկածելի հանգամանքներում գնահատող հանձնաժողովը նախ անտեսել է վերը նշված հանգամանքները, իսկ այնուհետև նաև կասկածելի պայմաններում շտկման ծանուցումը ուղարկել 2-րդ օրը, կարծես թե միտում ունենալով օգնել մասնակցին՝ որպեսզի վերջինս կարողանա իրականացնել 1 օրյա ժամկետում բանկային երաշխիք ստանալու գործընթացը:

Այս, և մի շարք այլ լրացուցիչ հանգամանքնելով պայմանավորված, նախ մենք խնդրել ենք սույն բողոքի քննությանը ներգրավել ՊՎԾ-ին և միաժամանակ խնդրում ենք նաև նշանակել ևս մեկ նիստ, որպեսզի հնարավորություն ունենանք իրականացնել մեր շահերի պաշտպանությունը ամբողջությամբ և ներկայացնենք նոր փաստեր:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ևս մեկ անգամ խնդրում ենք «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 26.03.2021թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/17 ծածկագրով բողոքը բավարարել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2021թ. ժամը 09:45-ին և 09.04.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի

վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>Եղվարդի համայնքապետարանի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Եղվարդի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.03.2021թ. թիվ 588 գրությամբ ներկայացրել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2021թ. ժամը 09:45-ին և 09.04.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգը, իսկ քարտուղարը 22.03.2021թ. ծանուցել է «Կոտայք Շին» ՍՊԸ-ին հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից շտկումը իրականացվել է 23.03.2021թ., որի համաձայն՝ հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Բողոքաբերի կողմից ներկայացված փաստերի մեծ մասը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ն ընթացակարգով զբաղեցրել է ոչ թե երկրորդ, այլ՝ երրորդ տեղ: Գնահատող հանձնաժողովը, արձանագրելով անհմապատասխանություն մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում, ոչ միայն ծանուցել է մասնակիցներին, այլ հեռախոսազանգի միջոցով ևս տեղեկացրել է վերջիններիս, այդ թվում նաև՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ին, որ հայտում բացակայում է հայտի ապահովումը: Միաժամանակ մասնակիցներին տեղեկացնելով, որ պարտավորվում են մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 23.03.2021թ. ժամը 17:00-ն, ներկայացնելու համապատասխան փաստաթուղթը:

Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից շտկում չի ներկայացվել, իսկ երկրորդ տեղ զբաղեցրած «Կոտայք Շին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կատարել է համապատասխան շտկում, որի հիման վրա ճանաչվել է ընտրված մասնակից»:

3. <u>ՀՀ պետական վերահսկողության ծառայության ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված միջնորդության հիման վրա Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ԳԲՔԱ-ՆԳ-2021/17 որոշմամբ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը բողոքի շրջանակներում, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն, ներգրավվել է որպես կողմ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը բողոքի քննության նպատակով 09.04.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Համամիտ եմ բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկների հետ, մասնավորապես՝ եթե Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, ապա դա պետք է այդպես լինի: Ինչ վերաբերում է շտկման հնարավորությանը, ապա այն ստեղծված է այն նպատակով, որ եթե տեխնիկական խնդիրներ լինեն կամ մասնակիցը մոռացած լինի ինչ-որ փաստաթուղթ կցելու, ապա հնարավորություն ունենա իրականացնելու: Հակառակ դեպքում՝ ոչ մեկ հայտի ապահովում չի ներկայացնի հայտի հետ, առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նոր միայն կդիմի բանկին: Գտնում եմ, որ բողոքաբերի բողոքը ենթակա է բավարարման, իսկ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտը մերժման, քանի որ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, մասնավորապես՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

4. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Եղվարդի համայնքապետարանի կողմից Եղվարդ համայնքի կարիքների համար՝ «Եղվարդի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Կոտայք Շին» ՍՊԸ-ն:

2. «Էներգացանցշին» ԲԲԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտը, մասնավորապես՝ հայտի ապահովումը, հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-րդ չափաբաժնի մասով «Կոտայք Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էներգացանցշին» ԲԲԸ-ի 26.03.2021թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, Եղվարդի համայնքապետարանի կողմից 31.03.2021թ. թիվ 588 գրությամբ ներկայացված փաստաթղթերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ **հայտի ապահովումը սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:**

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ***Հայտի ապահովումը ներկայացվում է*** միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ ***բանկային երաշխիքի*** կամ կանխիկ փողի ***ձևով:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ

ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Եղվարդի համայնքապետարանի կողմից Եղվարդ համայնքի կարիքների համար «Եղվարդի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ, որի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Նույն կետի 7.4 ենթակետով սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Եվ այսպես, Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Կոտայք Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը և նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Կոտայք Շին» ՍՊԸ-ին՝ մինչև 23.03.2021թ. ժամը 17-00-ն շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Կոտայք Շին» ՍՊԸ-ին 22.03.2021թ.-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-րդ չափաբաժնի մասով «Կոտայք Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ **<u>հայտի ապահովումը</u> սույն օրենքով նախատեսված դեպքերում <u>մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:</u>**

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում***, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ***Հայտի ապահովումը***

ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ ***բանկային երաշխիքի*** կամ կանխիկ փողի ***ձևով:***

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 384-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիքն ապահովում է բենեֆիցիարի հանդեպ պրինցիպալի պարտավորության (հիմնական պարտավորության) պատշաճ կատարումը:

Օրենսգրքի 388-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիքն ուժի մեջ է մտնում այն տալու օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով <u>պարտավորությունը դադարում է երաշխիքով որոշված ժամկետի ավարտով:</u>***

Ընթացակարգի հրավերի հավելված 3-ի՝ երաշխիքի, 5-րդ կետով սահմանվել է, որ ***երաշխիքը գործում է*** բենեֆիցիարի կողմից «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով պրինացիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված ***իննսուն աշխատանքային օր:***

Այսպիսով՝ վերը նշված կարգավորումների համաձայն՝ հայտի ապահովումը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց, որը պետք է դադարի երաշխիքով որոշված ժամկետի ավարտով: Ընդ որում՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով և Ընթացակարգի հրավերի Հավելված 3-ով երաշխիքի վավերականության ժամկետ է սահմանվել իննսուն աշխատանքային օրը:

Մինչդեռ արձանագրում եմ, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում որպես հայտի ապահովում ներկայացված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ. տրված թիվ 010 բանկային երաշխիքում **<u>բացակայում է երաշխիքի վավերականության ժամկետը:</u>**

Այսպես, Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>***, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել Կարգի 42-րդ կետով և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչել է ընտրված մասնակից, այն դեպքում, երբ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքում սահմանված չէ, թե այն մինչև երբ է վավեր, ուստի արձանագրում եմ, որ նման ձևով կազմված բանկային երաշխիքը չի համապատասխանում երաշխիքի համար վկայակոչված իրավակարգավորումներին:

Վերը նշված հիմքերով պայմանավորված գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 23.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Կոտայք Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 26.03.2021թ. ներկայացված բողոքը բավարել՝ պարտավորեցնել «ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**